

**ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Սարգսյան Արտաշես
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: Շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումը ներառված է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսումնական ծրագրերում: Դրանց ուսուցում նախատեսված է նաև ոչ մասնագիտական ֆակուլտետներում, քանի որ այդ միջոցների ու եղանակների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքում գործնական նշանակություն ունի: Խոսքում հանդիպող շարահյուսական տարբեր սխալների շարքում կապակցմանն առնչվող սխալներն էական տեղ են զբաղեցնում:

Հիմնախնդիրը: Բանասիրական ֆակուլտետներում շարահյուսության, հետևաբար նաև կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումն իրականացվում է ավելի մեծ խորությամբ՝ քննության առնելով նաև տեսական մի շարք հարցեր, իսկ ոչ մասնագիտական ֆակուլտետներում ուշադրությունն առաջին հերթին սևեռվում է կիրառական խնդիրների վրա: Այս դեպքում տեսական հարցերին անդրադարձ կատարվում է գործնականում կիրառելու համար: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է ընտրել ճիշտ մեթոդներ:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների վերաբերյալ այն մոտեցումները, որոնք առկա են բուհական դասագրքերում ու ձեռնարկներում և բացահայտել այն մեթոդները, որոնց կիրառումով հնարավոր է ավելի մատչելի ներկայացնել նյութը՝ գործնականում ամրապնդելով ուսանողների գիտելիքները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին անդրադարձել են բուհական դասագրքերի ու ձեռնարկների գրեթե բոլոր հեղինակները՝ Մ. Սասարյանը [2], Ս. Գյուլբուրադյանը [6], Ռ. Իշխանյանը [8], Խ. Բաղիկյանը [5, 8], Ա. Պապոյանը [10], Լ. Եզեկյանը [7] և ուրիշներ: Այս թեման ներկայացված է նաև ոչ մասնագիտական ֆակուլտետների համար նախատեսված դասագրքում [3]: Հոդվածում ներկայացված և վերլուծված են հեղինակների մոտեցումները և նյութի մատուցման ձևերը:

Հետազոտության նորույթը: Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու ուսուցման այն մեթոդները, որոնց կիրառությունն ավելի արդյունավետ է դարձնում շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումը: Մասնավորապես առաջարկվում է թեման ուսուցանելիս կատարել նախադասություններում առկա կապակցությունների վերլուծություն՝ վերհանելով յուրաքանչյուրում կիրառված կապակցական միջոցներն ու եղանակները, մեկնաբանելով դրանց առանձնահատկությունները:


Բանալի բառեր: Շարահյուսական կապակցման միջոցներ և եղանակներ, համաձայնություն, կառավարում, խնդրառություն, առդրություն, բառաձև, կապ, շաղկապ, շարադասություն, հնչերանգ, ուսուցման մեթոդներ:

Շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումն առնչվում է տեսական և կիրառական մի շարք խնդիրների: Ներկայումս գործածվող բուհական դասագրքերում ու ձեռնարկներում որպես շարահյուսական կապակցման միջոցներ հիմնականում նշվում են բառաձևերը, կապերն ու շաղկապները, շարադասությունը, հնչերանգը, իսկ որպես կապակցման եղանակներ՝ համաձայնությունը, կառավարումը (կամ խնդրառությունը) և առդրությունը: Մեր քննած բուհական

դասագրքերում ու ձեռնարկներում կապակցման միջոցները ներկայացնելիս հեղինակները հետևյալ մոտեցումներն են ցուցաբերել: Մ. Ասատրյանը կապակցման միջոցները քննելիս նշում է *բառաձևերը, կապերն ու շաղկապները, շարադասությունը* և *հնչերանգը* [2, էջ 33-49]: Կապակցման միջոցներն այսպես են ներկայացնում նաև Ա. Պապոյանը [10, էջ 9], Լ. Եզեկյանը [7, էջ 318-321]: Ս. Գյուլբուդադյանը նշում է. «Հայերենի շարահյուսական կապակցության միջոցները երկուսն են՝ *ա) հնչյութային* (հոլովման, խոնարհման վերջավորություններ, հերթագայություն, հոգնակերտ և առկայության վերջավորություններ, կապեր, շաղկապներ), *բ) վերհնչյութային* (շարադասություն, հնչերանգ)» [6, էջ 14]: Ռ. Իշխանյանը հետևյալ ձևով է ներկայացնում. «...Ինչպես դժվար չէ նկատել, կապակցման միջոցները երկու տեսակ են՝ *ա) քերականական միջոցներ* (բայի խոնարհման, գոյականի և դերանվան հոլովման, դեմքի ու թվի ձևեր և այլն) և *բ) բառային*, այն է՝ կապեր ու շաղկապներ» [8, էջ 35-36]: Հնչերանգի և շարադասության կապակցական դերը հեղինակը քննում է կոնկրետ միավորների կապակցությունը ներկայացնելիս (ենթակա-ստորոգյալ, բացահայտիչ-բացահայտյալ և այլն): Խ. Բադիկյանը շեշտում է քերականական կարգերի արտահայտման ձևերը առանձնացնելով *ձևային* (թեքություն, հերթագայություն, հոգնակերտ և առկայացման ցուցիչներ) և *բառային* (կապեր և շաղկապներ) միջոցներ [5, էջ 7-8, նաև 9, էջ 7-8]: Ինչպես տեսնում ենք, հեղինակների մոտեցումների միջև կան թե՛ ընդհանրություններ, թե՛ տարբերություններ:

Ուսանողները բառաձևերի կազմությունն ու քերականական իմաստները ուսանած են լինում շարահյուսությանը նախորդող բաժինը՝ ձևաբանությունը անցնելիս, ուստի դժվար չի լինում ընկալել դրանց կապակցական դերը: Բավական է միևնույն շարադասությամբ ներկայացնել քերականորեն չփոխված և անհրաժեշտ ձևերով փոխված բառաշարքեր, և պարզ կդառնա, որ նախադասություն (կապակցություն) ձևավորվում է միայն երկրորդ դեպքում (օրինակ՝ *Ծառ ճյուղ օրորել քամի – Ծառի ճյուղերն օրորվում էին քամուց*):

Կապակցման մյուս միջոցները՝ կապերն ու շաղկապները, ուսանողները նույնպես ուսումնասիրում են ձևաբանություն բաժնում: Իրենց հիմնական գործառույթով լինելով քերականական՝ կապերն ու շաղկապները ձևաբանության մեջ առաջին հերթին ուսումնասիրվում են հենց կապակցական գործառույթի տեսանկյունից, ուստի շարահյուսության ուսուցման ժամանակ հեշտ է լինում նրանց այդ դերը բացատրել: Դասախոսը բերում է օրինակներ, որոնցում շարահյուսական կապերն իրականացել են կապերի ու շաղկապների միջոցով: Դա կարելի է ակնառու ցույց տալ՝ զուգահեռներ անցկացնելով հոլովաձևերով ու կապական կառուցներով արտահայտված միևնույն անդամների միջև, օրինակ՝ *խոսել/դասից/դասի մասին*: Պետք է ուսանողների ուշադրությունը հրավիրել կառուցների ներքին կապերի վրա: Այս դեպքում առկա է երկու կապակցում. կապը կապակցվում է գերադաս անդամին, իսկ կապի խնդիրը՝ կապին՝ նրա հետ դառնալով լրացում: Այսինքն՝ իրականանում են շարահյուսական հետևյալ առնչությունները.



Թեման բացատրելիս տեղին է գործածել լուսապատկերային ցուցադրություն:

Շարադասության կապակցական գործառույթն ուսուցանելու համար հարմար է բերել միևնույն բառական միավորների շարադասական երեք տարբերակ: Պետք է ընտրել այնպիսի տարբերակներ, որ երկու դեպքում ստացվեն տարբեր իմաստներով նախադասություններ, իսկ երրորդ դեպքում կապակցություն չստացվի: Օրինակ՝ *Գեղեցիկ աղջիկը գունավոր մատիտներով ծաղկեփունջ նկարեց: Աղջիկը գունավոր մատիտներով գեղեցիկ ծաղկեփունջ նկարեց: Գունավոր նկարեց աղջիկը մատիտներով ծաղկեփունջ գեղեցիկ*: Ակնհայտ է, որ առաջին նախադասության մեջ *գեղեցիկ* բառը որոշիչ է *աղջիկ* ենթակայի համար, երկրորդ նախադասության մեջ՝ *ծաղկեփունջ* ուղիղ խնդրի համար, իսկ երրորդ դասավորության դեպքում նախադասություն չի ձևավորվել, քանի որ շարադասության կապակցական գործառույթը ճիշտ չի կիրառվել: Այսպիսի ակնառու օրինակներով շատ հեշտ է լինում շարադասության կապակցական դերը ներկայացնելը:

Հնչերանգի կապակցական դերն ուսուցանելիս ևս կարելի է բերել այնպիսի նախադասությունների օրինակներ, որոնցում հնչերանգի փոփոխությունը իմաստային-քերականական փոփոխություն է առաջացնում: Օրինակ՝ *Նա քայլում էր հպարտ որդու ձեռքը բռնած: Նա քայլում էր՝ հպարտ որդու ձեռքը բռնած*: Տարբեր տեղերում եղած արտասանական դադարը, որը գրավոր խոսքում արտահայտվել է

բութով, *հայարտ* բառը առաջին նախադասության մեջ դարձնում է *քայլում էր* ստորոգյալի ձևի պարագա լրացում (այսինքն՝ կապակցում է նրան), իսկ երկրորդում՝ *որդու* հատկացուցչի որոշիչ լրացում:

Շարահյուսական կապակցման եղանակներն ուսուցանվում են կապակցման միջոցներից հետո, քանի որ իրականանում են այդ միջոցներով, ուստի նախ անհրաժեշտ է իմանալ միջոցները և նոր միայն եղանակները: Սրանց ուսուցումն ավելի բարդ է: Նախ որոշ տարակարծություններ կան եղանակների դասակարգման հարցում: Քննված դասագրքերում սովորաբար առանձնացվում են շարահյուսական կապակցման ընդունված երեք եղանակները՝ համաձայնություն, կառավարում (կամ խնդրառություն) և առդրություն: Ռ. Իշխանյանը իրավացիորեն նշում է նաև կախումը՝ այն չհամարելով կապակցման առանձին եղանակ [8, էջ 33]: Սա այն եղանակն է, որի դեպքում որոշիչների իմաստի թելադրանքով որոշյալները դրվում են հոգնակի թվով, ինչպես՝ *բազմազան գրքեր, տարբեր ծաղիկներ* և այլն: Կապակցման այս եղանակին անդրադարձել է դեռևս Մ. Աբեղյանը [1, էջ 513]: Այս իրողությանն անդրադարձել են նաև

Մ. Ասատրյանը [2, էջ 200-204], Մ. Գյուլբուդադյանը [6, էջ 143-144], Խ. Բաղիկյանը [9, էջ 122-124]: Ինչ վերաբերում է կապակցման մյուս եղանակներին, ապա դրանց ուսուցումը պետք է շաղկապել այլ թեմաների, որոնք բավականին ծանոթ են ուսանողներին: Այսպես համաձայնությունը ժամանակակից հայերենում առաջին հերթին հանդես է գալիս ենթակայի ու ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի կապակցության դեպքում: Այդ թեմաներն ուսուցանվում են նաև հանրակրթական դպրոցում, սակայն դրանց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև բուհում, քանի որ խոսքում հաճախ են հանդիպում համաձայնությանն առնչվող սխալները (օրինակ՝ *Ընդունվում է պատվերներ: Պահանջվում է բանվորներ:*): Ընդ որում, եթե վերը նշված տեսական խնդիրների ուսուցումը նախատեսվում է միայն բանասիրական ֆակուլտետներում, ապա համաձայնության գործնական կիրառության ուսուցումը իրականացվում է նաև ոչ մասնագիտական ֆակուլտետներում և ներկայացվում է դասագրքերում [3, էջ 87-95]: Այս թեման ուսուցանելիս հանձնարարվում են համապատասխան գործնական աշխատանքներ [4 և 10]: Ուսուցանելիս հատուկ պետք է շեշտել անհամաձայնության դեպքերը, բացառությունները՝ մեկնաբանելով դրանց իմաստային-քերականական հիմքերը (հավաքականություն, բազմակիություն, բառիմաստ և այլն):

Կառավարման (կամ խնդրառության) ուսուցումը ևս գործնական կարևոր նշանակություն ունի, քանի որ հաճախ են հանդիպում նաև կապակցման այս եղանակին առնչվող սխալները: Խնդրառության դեպքում գերադաս բառի պահանջով ստորադաս բառը դրվում է որևէ հոլովով կամ հոլովակապային կառույցով (օրինակ՝ *դնել սեղանին//սեղանի վրա*): Խոսակցական լեզվում կան գրական նորմից շեղվող ընդհանրացած կիրառություններ, որոնք մեծ տարածում ունեն (*ինձ համար-իմ համար, քեզ մոտ-քո մոտ* և այլն): Այսպիսի կիրառությունները պետք է հատուկ քննության առարկա դարձնել ներկայացնելով գրական նորմի ձևերը: Նյութն ուսուցանելիս հանձնարարվում են գործնական տարբեր աշխատանքներ: Կառավարման ուսուցման ժամանակ անհրաժեշտ է բացատրել նաև *արժույթ* հասկացությունը, որին ուսանողները ծանոթանում են հենց այս թեմայի ուսուցման ընթացքում: Արժույթի ուսուցումը նախատեսվում է միայն մասնագիտական ֆակուլտետներում: Արժույթը բառի՝ խնդրառությամբ կապակցելիության ցուցիչն է: Նյութը լիովին հասկանալի դարձնելու համար դարձյալ նպատակահարմար է գործածել լուսապատկերային ցուցադրություն, որում սլաքներով պատկերված կլինեն շարահյուսական կապերը:

Առդրությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում շարահյուսական կապն իրականանում է շարադասության և հնչերանգի միջոցով, օրինակ՝ *բարձր շենք, սաֆալտապատ փողոց*: Այսինքն՝ լրացումը կապակցման համար քերականորեն չի փոփոխվում, այլ կապակցության մեջ գրավում է այնպիսի դիրք, որի միջոցով ստեղծվում է իմատային անհրաժեշտ կապն իր լրացյալի հետ: Կապակցման այս եղանակի կիրառման դեպքում էապես մեծանում է շարադասության և հնչերանգի դերը: Առդրությունը հեշտ է մեկնաբանել՝ համապատասխան օրինակներով հակադրելով արդեն ուսուցանված համաձայնությանն ու խնդրառությանը: Դասագրքերում որպես կապակցման եղանակներ երբեմն ներկայացվում են նաև շարահարությունը և գոդումը: Դրանք մեր կարծիքով կապակցման միջոցներ են:

Երբ արդեն ուսուցանվել են շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները, բավարար չափով կատարվել են նրանց վերաբերյալ գործնական աշխատանքներ, կարելի է հանձնարարել

նախադասության վերլուծում՝ ըստ շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների վերհանման: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի նախադասություն, որում լինեն բոլոր միջոցներով ու եղանակներով կապակցված անդամներ, օրինակ՝ *Կյանքի փորձով իմաստնացած ծերունին՝ նկարիչը, դանդաղ խոսում էր առօրյա գործերի մասին*: Սլաքներով նշվում են շարահյուսական կապերը, այնուհետև նախադասությունից դուրս են գրվում իրար կապակցված անդամները, և որոշվում են յուրաքանչյուր կապակցության մեջ առկա կապակցման միջոցներն ու եղանակները: Այսպես՝ *կյանքի փորձով* – կառավարում, բառածն (սեռական-տրական հոլով), շարադասություն, հնչերանգ // *փորձով իմաստնացած* – կառավարում, բառածն (գործիական հոլով), շարադասություն, հնչերանգ // *իմաստնացած ծերունին* – առդրություն, շարադասություն, հնչերանգ // *ծերունին՝ նկարիչը* – համաձայնություն, բառածն (ուղղական հոլով, եզակի թիվ), շարադասություն, հնչերանգ // *ծերունին խոսում էր* – համաձայնություն, բառածն (եզակի թիվ), շարադասություն, հնչերանգ // *դանդաղ խոսում էր* – առդրություն, շարադասություն, հնչերանգ // *խոսում էր գործերի մասին* – կառավարում (սեռական-տրական հոլով+կապ), շարադասություն, հնչերանգ // *գործերի մասին* – կառավարում, բառածն (սեռական-տրական հոլով), շարադասություն, հնչերանգ // *առօրյա գործերի* – առդրություն, շարադասություն, հնչերանգ: Այսպիսի վերլուծության միջոցով վերհանվում են յուրաքանչյուր կապակցության մեջ առկա կապակցման եղանակը և նրա իրականացման միջոցը: Մի քանի այսպիսի վերլուծության միջոցով ամրապնդվում է նյութի իմացությունը: Առաջին վերլուծությունից հետո կարելի է պահանջել, որ ուսանողները նշեն նաև բառածնի արտահայտման առանձնահատկությունները (ներքին թեքում, արտաքին թեքում, մասնիկավորում, հերթագայություն, տարահիմքություն և այլն): Դրա միջոցով կապ կստեղծվի ձևաբանական իրողությունների հետ, ուսանողները կվերհիշեն անցած նյութերը, ավելի հստակ ու խորությամբ կպատկերացնեն քերականական իմաստների դրսևորման միջոցների առանձնահատկությունները: Այսպիսով՝ ուսուցման ընթացքում կխորացվեն տեսական գիտելիքները, կզարգանան գործնական կարողությունները, կապ կստեղծվի անցած և նոր նյութերի միջև: Այդ ամենը կնպաստի ճիշտ խոսք կազմելու հմտության ավելացմանը:

Եզրակացություն: Շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցման ընթացքում թե՛ մասնագիտական, թե՛ ոչ մասնագիտական ֆակուլտետներում անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել գործնական հմտությունների զարգացումը: Պարզ է, որ մասնագիտական ֆակուլտետներում տեսական խնդիրների ուսուցումը պետք է իրականացնել ավելի մեծ խորությամբ, իսկ ոչ մասնագիտական ֆակուլտետներում դրանք պետք է ուսուցանվեն ավելի փոքր, բայց բավարար ծավալով, որպեսզի գործնականում կիրառելիս ուսանողներն ունենան անհրաժեշտ տեսական գիտելիքները: Բացատրությունները ճիշտ է ուղեկցել համապատասխան ցուցադրություններով, իսկ անցած նյութը՝ ամրապնդել գործնական տարբեր աշխատանքներով: Արդյունավետ միջոց է նախադասության վերլուծությունն ըստ շարահյուսական կապերի, որի ընթացքում առանձին-առանձին վերհանվում են յուրաքանչյուր կապակցության մեջ առկա միջոցներն ու եղանակները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, «Միտք» հրատ., Երևան, 1965:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:
3. Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, «Զանգակ» հրատ., Երևան, 2019:
4. Ավետիսյան Յու. և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ (գործնական աշխատանքների ձեռնարկ), ԵՊՀ հրատ., Երևան, 2016:
5. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, հեղ. հրատ., Երևան, 2008:
6. Գյուլբուրադյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1988:
7. Եզեկյան Լ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Երևան, 2005:
8. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն: Պարզ նախադասություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1986:
9. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2003,

10. Պապոյան Ա., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2004:

ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ СРЕДСТВ И СПОСОБОВ СИНТАКСИЧЕСКОГО СОЕДИНЕНИЯ

Саргсян Арташес
Ереванский государственный университет,
Армения

Аннотация

На филологических факультетах обучение средствам и способам синтаксического соединения проводится углубленно, исследуется ряд теоретических вопросов, в то время как на других факультетах внимание в первую очередь сосредоточено на прикладных проблемах. В обоих случаях в обучении необходимо использовать те методы, которые обеспечат практическое применение полученных знаний. В статье представлены подходы, имеющиеся в учебниках и учебных пособиях вузов, а также методы обучения, использование которых делает обучение более эффективным. В частности, предлагается при преподавании темы анализировать синтаксические связи в предложениях, выявляя средства и способы связи, используемые в каждом из них, комментируя их особенности.

Ключевые слова: *способы и средства синтаксического соединения, согласование, управление, примыкание, форма слова, предлог, союз, порядок слов, интонация, методы обучения.*

Список использованной литературы

1. Абегиан М., Теория армянского языка, изд. "Митк", Ереван, 1965.
2. Асатрян М., Современный армянский язык: синтаксис, изд. ЕГУ, Ереван, 1987.
3. Аветисян Ю. и др., Армянский язык и культура речи, изд. "Зангак", Ереван, 2019.
4. Аветисян Ю. и др., Армянский язык и культура речи (пособие практических работ), изд. ЕГУ, Ереван, 2016.
5. Бадибян Х., Синтаксис современного армянского языка, авт. изд., Ереван, 2008.
6. Гюлбудагян С., Синтаксис современного армянского языка: простое предложение, изд. ЕГУ, Ереван, 1988.
7. Езекян Л., Армянский язык, изд. ЕГУ, Ереван, 2005.
8. Ишханян Р., Синтаксис современного армянского языка. Простое предложение, изд. ЕГУ, Ереван, 1986.
9. Папоян А., Бадибян Х., Синтаксис современного армянского языка, изд. ЕГУ, Ереван, 2003.
10. Папоян А., Пособие практических работ по современному армянскому языку, изд. ЕГУ, Ереван, 2004.

THE PROBLEMS OF TEACHING MEANS AND METHODS OF SYNTACTIC CONNECTIONS

Sargsyan Artashes
Yerevan State University, Armenia

Summary

The teaching of the means and methods of connection in the faculties of philology is carried out in greater depth, examining a number of theoretical issues, and in non-professional faculties the focus is primarily on practical issues. In both cases there is a need to apply methods in the teaching that will ensure the practical application of the knowledge gained. The article presents the approaches to syntactic means and methods that are available in university textbooks and manuals, the teaching methods, the use of which makes the teaching of syntactic means and methods more effective. In particular, when teaching the topic, it is recommended to analyze the connections in the sentences, revealing the means and methods used in each, commenting on their features.

Keywords: *means and methods of syntactic connections, reconciliation, syntactic control, adjoining, word forms, intonation, the teaching methods.*

References:

1. Abegyan M., The theory of Armenian language, "Mitk" Publishing House, Yerevan, 1965.
2. Asatryan M., Modern Armenian language: Syntax, YSU Publishing House, Yerevan, 1987.
3. Avetisyan Yu. and others, Armenian language and speech culture, "Zangak" Publishing House, Yerevan, 2019.
4. Avetisyan Yu. and others, Armenian language and speech culture (Handbook of practical work), YSU Publishing House, Yerevan, 2019.
5. Badikyan Kh., Syntax of the modern Armenian language, Yerevan, 2008.

6. Gulbudagyan S., Syntax of the modern Armenian language, simple sentence, YSU Publishing House, Yerevan, 1988.
7. Ezekeyan L., Armenian Language, YSU Publishing House, Yerevan, 2005.
8. Ishkanyan R., Syntax of the modern Armenian language, simple sentence, YSU Publishing House, Yerevan, 1986.
9. Papoyan A., Badikyan Kh., Syntax of the modern Armenian language, YSU Publishing House, Yerevan, 2003.
10. Papoyan A., Handbook of practical works on the modern Armenian language, YSU Publishing House, Yerevan, 2004.

Материал был представлен и отправлен на рецензию: 24.10.2021

Принято к публикации 15.11.2021

Рецензент: канд. пед. наук, канд. пед. наук, доцент Лусине Айрапетян

The material was submitted and sent to review: 24.10.2021

Was accepted for publication: 15.11.2021

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Lusine Hayrapetyan